**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 21-ը օգոստոսի 2017թ.
ժամը $11^{00}$

*Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝*

ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բադալյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝ 0:

**1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում **առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների** կողմից ներկայացված հրավերով նախատեսված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերն առկա են և համապատասխանում են գնանշման հարցման հրավերով սահմանված պահանջներին.

***ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացառությամբ «Նարնիկ» ՍՊԸ-ի, որն ըստ ներկայացված տվյալների ունի 77,396 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ:***

Հիմք ընդունելով 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մերժել «Նարնիկ» ՍՊԸ-ի հայտը: Քանի որ «Նարնիկ» ՍՊԸ-ի կողմից հանձնաժողովին առձեռն ներկայացվեց ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից տրված տեղեկանք, ըստ որի, վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետի պահանջները՝ որոշեց «Նարնիկ» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալները չներկայացնել լիազորված մարմին:

Քանի որ «Նարնիկ» ՍՊԸ-ի մերժման արդյունքում ընթացակարգի 3-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով առաջարկված գները գերազանցում էին պատվիրատուի՝ տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի պահանջները, գների նվազեցման նպատակով 24.08.2017թ. ժամը 11:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպվեցին բանակցություններ: Բանակցությունների արդյունքում «Ռեալ Բռաինեսս» ՍՊԸ-ն 3-րդ չափաբաժնի գինը նվազեցրեց 216,000 դրամի, 6-րդ չափաբաժնի գինը՝ 6,120,000 դրամի և 7-րդ չափաբաժնի գինը՝ 240,000 դրամի: Հիմք ընդունելով նշված հանգամանքը հանձնաժողովը որոշեց 3-րդ և 7-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող ճանաչել «Ռեալ Բռաինեսս» ՍՊԸ-ին և վերջինիս առաջարկել ներկայացնելու հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց 6-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարել չկայացած:

«Ռեալ Բռաինեսս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով ներկայացվեցին պահանջվող փաստաթղթերը, որոնք հանձնաժողովի կողմից գնահատվեցին հրավերի պահանջներին համապատասխան:

1.2 **28.08.2017թ.** հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները և պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված համապատասխան մասնագիտական եզրակացությունը՝ հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցնող մասնակիցների որակավորման հատկանիշները և ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխան (համարժեք) «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջիններիս հայտարարել ընտրված(հաղթող) մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Ս. Աբովյան |
| Գնահատող | Մ. Խալաթյան |
| Գնահատող | Հ. Բաղալյան |
| Գնահատող | Ա. Մաղաքյան |
| **Գնումները համակարգող՝** | Ռ. Մարդոյան |